

**ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ  
ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ՓՈՂՈՑԻՑ ՈՒՅԾ  
ԲՆԱԿԱՎԱՅՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՍՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1**

ք. Սիսիան

« 04 » 08 2020թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Սարգսյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու-1) և կոնսորցիումի անդամ <<ՍԵՐՊԱՆՏԻՆԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի (այսուհետ՝ Կապալառու-2) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սայաթ-Նովա, Ա. Մանուկյան, Շահումյան փողոցների, Շաքի բնակավայրի ճանապարհի և Սյունիք փողոցից Ույծ բնակավայր տանող ճանապարհահատվածի կապիտալ վերանորոգման

Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Հավելված 2-ով:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### **2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### **3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհայտ անհնար,

բ) Կապալառուին խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուին իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուին պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:<sup>27</sup>

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:<sup>28</sup>

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

<sup>27</sup> Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:

<sup>28</sup> Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 550438713 (հինգ հարյուր հիսուն միլիոն չորս հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր տասներեք) ՀՀ դրամ, որից 91739785 (ինսունմեկ միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 290865458 (երկու հարյուր ինսուն միլիոն ութ հարյուր վաթսունհինգ հազար չորս հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ որից 48477576 (քառասունութ միլիոն չորս հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 259573255 (երկու հարյուր հիսունինը միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ՝ որից 43262209 (քառասուներեք միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:<sup>29</sup>

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման

<sup>29</sup> Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքվի սույն կետից հանվում են «որից — (—) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:

ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>32</sup>

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

<sup>32</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>34</sup>

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է տաս էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

<sup>34</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սիսիանի համայնք  
ք. Սիսիան, Սիսական 31  
ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչ.  
Հ/Հ 900292101285  
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար Ա. Սարգսյան  
(ստորագրություն)



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-1**

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ  
ք. Սիսիան, Շիրվանզադե 5  
<Հայրիզնեսրանկ>> ՓԲԸ  
Հ/Հ 1150008211381335  
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն Կ. Վարդանյան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-2**

<<ՍԵՐՊԱՆՏԻՆԱ>> ՍՊԸ  
ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան-Շաքի խճ. 3  
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Սիսիանի մ/ճ  
Հ/Հ 220333331407000  
ՀՎՀՀ 09801233

Տնօրեն Ա. Սարգսյան  
(ստորագրություն)



Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ\***

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ  
ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ՓՈՂՈՑԻՑ ՈՒՅԾ ԲՆԱԿԱՎԱՅՐ  
ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվները կցվում է պայմանագրին:

\* Կապալառուն աշխատանքները կատարում է՝  
Չափաբաժին 1 - ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիանի համայնք,  
Չափաբաժին 1 - ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիանի համայնք, Շաքի բնակավայր:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սիսիանի համայնք  
ք. Սիսիան, Սիսական 31  
ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչ.  
Հ/Հ 900292101285  
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար Ա. Սարգսյան  
(ստորագրություն)



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-1**

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ  
ք. Սիսիան, Շիրվանզադե 5  
<<Հայթիզնեսքանկ>> ՓԲԸ  
Հ/Հ 1150008211381335  
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն Վ. Վարդանյան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-2**

<<ՍԵՐՊԱՆՏԻՆԱ>> ՍՊԸ  
ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան-Շաքի խճ. 3  
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Սիսիանի մ/ճ  
Հ/Հ 220333331407000  
ՀՎՀՀ 09801233

Տնօրեն Ա. Սարգսյան  
(ստորագրություն)



**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ՓՈՂՈՑԻՑ ՈՒՅԾ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N<br>ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ                                           | Աշխատանքների կատարման ժամկետը**       |                                 |
|----------|-------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------|---------------------------------|
|          |                                                                                                                   | Սկիզբը                                | Ավարտը                          |
| 1        | Սայաթ-Նովա, Ա. Մանուկյան և Շահումյան փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքներ                                   | Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից | 120 օրացույցային օրվա ընթացքում |
| 2        | Սյունիք փողոցից Ոյծ բնակավայր փանող ճանապարհահատվածի և Շաքի բնակավայրի ճանապարհի կապիտալ վերանորոգման աշխատանքներ | Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից | 120 օրացույցային օրվա ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սիսիանի համայնք  
ք. Սիսիան, Սիսական 31  
ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչ.  
Հ/Հ 900292101285  
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար  Ա. Սարգսյան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-1**

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ  
ք. Սիսիան, Շիրվանզադե 5  
<<Հայրիզնեսբանկ>> ՓԲԸ  
Հ/Հ 1150008211381335  
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն  Կարգապայան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-2**

<<ՍԵՐՊԱՆՏԻՆԱ>> ՍՊԸ  
ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան-Շաքի խճ. 3  
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Սիսիանի մ/6  
Հ/Հ 220333331407000  
ՀՎՀՀ 09801233

Տնօրեն  Ա. Սարգսյան  
(ստորագրություն)



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

|                                                                   |                                                                                                     |                                                                                                                                      | Աշխատանքի                                                                          |         |      |       |       |        |        |           |           |           |           |           | ՀՀ դրամ              |
|-------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|-----------|-----------|-----------|-----------|-----------|----------------------|
| հրավեր<br>ով<br>նախա<br>տեսվա<br>ծ<br>չափաբ<br>ածնի<br>համար<br>ը | գնումների<br>պլանով<br>նախատեսվ<br>ած<br>միջանցիկ<br>ծածկագիրը՝<br>ըստ ԳՄԱ<br>դասակարգ<br>ման (CPV) | անվանումը                                                                                                                            | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝<br>ըստ ամիսների, այդ թվում** |         |      |       |       |        |        |           |           |           |           |           |                      |
|                                                                   |                                                                                                     |                                                                                                                                      | հունվար                                                                            | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս   | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր  | դեկտեմբեր | Ըն<br>դա<br>մեն<br>ը |
| 1                                                                 | 45231162/1                                                                                          | Սայաթ-Նովա, Ա.<br>Մանուկյան և Շահումյան<br>փողոցների կապիտալ<br>վերանորոգման<br>աշխատանքներ                                          | .                                                                                  | .       | .    | .     | .     | .      | .      | 290865458 | 290865458 | 290865458 | 290865458 | 290865458 | 290865458            |
| 2                                                                 | 45231162/2                                                                                          | Սյունիք փողոցից Ույծ<br>բնակավայր փանոզ<br>ճանապարհահատվածի և<br>Շաքի բնակավայրի<br>ճանապարհի կապիտալ<br>վերանորոգման<br>աշխատանքներ | .                                                                                  | .       | .    | .     | .     | .      | .      | 259573255 | 259573255 | 259573255 | 259573255 | 259573255 | 259573255            |

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:  
**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սիսիանի համայնք  
ք. Սիսիան, Սիսական 31  
ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչ.  
Հ/Հ 900292101285  
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան  
(ստորագրություն)



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-1**

«ՀԻԴՐՈ» ՍՊԸ  
ք. Սիսիան, Շիրվանզադե 5  
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1150008211381335  
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն՝ Վ. Կարդանյան



**ԿԱՊԱԼԱՌՈՒ-2**

«ՍԵՐՊԱՆՏԻՆԱ» ՍՊԸ  
«Սյունիքի մարզ, Սիսիան-Շաքի խճ. 3  
«Ալբա-կոնկրետ» ագրիկոլ բանկ» ՓԲԸ Սիսիանի մ/ճ  
Հ/Հ 220333331407000  
ՀՎՀՀ 09801233

Տնօրեն՝ Ա. Սարգսյան  
(ստորագրություն)



**Ծավալաթերթ-նախահաշիվ**  
**Սիսիան համայնքի Սյունիք փողոցից Ույծ բնակավայր տանող ճանապարհահատվածի կապիտալ վերանորոգում , հատված ՊԿ0+00÷ՊԿ12+93**

| << Աշխատանքների անվանումը      |                                                                                                                                 | Չափի միավորը   | Քանակը | Միավորի արժեքը* (հազ. դրամ) | Ընդհանուր արժեքը (հազ. դրամ) |
|--------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|--------|-----------------------------|------------------------------|
| 1                              | 2                                                                                                                               | 3              | 4      | 5                           | 6                            |
| <b>I Քանդման աշխատանքներ</b>   |                                                                                                                                 |                |        |                             |                              |
| 1                              | Գոյություն ունեցող ճանապարհային քայքայված ա/բ ծածկի քանդում խճային հիմքի հետ միասին էքս./1,0մ <sup>3</sup> / բարձում ա/ինքնաթափ | մ <sup>3</sup> | 1240   | 0,833                       | 1032,920                     |
| 2                              | Տեղափոխում լցակույտ 2.3կմ                                                                                                       |                |        |                             |                              |
|                                | <b>1.Ընդամենը /հազ. դրամ/</b>                                                                                                   | տոն            | 2480   | 0,42                        | 1041,600                     |
|                                | <b>1.Ընդամենը(%)</b>                                                                                                            |                |        |                             | <b>2074,520</b>              |
| <b>II Հողային աշխատանքներ</b>  |                                                                                                                                 |                |        |                             | <b>1,07</b>                  |
| 1                              | IV 10ե բնահողի մշակում ձեռքով և տեղափոխում բուլդոզերով 50մ                                                                      | մ <sup>3</sup> | 50,00  |                             |                              |
| 2                              | 10ե IV կարգի բնահողի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք                                                                  | մ <sup>3</sup> | 970,0  | 6,320                       | 316,000                      |
| 3                              | Բնահողի խտացում գլոնով 25տոն քաշով, 6 անցումով 1 հետքի վրայով, h=30սմ շերտի հաստությամբ , ջրումով                               | մ <sup>3</sup> | 1020   | 0,470                       | 455,900                      |
| 4                              | Ավելորդ IV 10ե գրունտի մշակում և բարձում էքսկավատորով /1,0մ <sup>3</sup> / ա/ինքնաթափերի վրա                                    | մ <sup>3</sup> | 1270   | 0,690                       | 703,800                      |
| 5                              | Տեղափոխում լցակույտ 2.3կմ                                                                                                       |                |        | 0,850                       | 1079,500                     |
| 6                              | Հողային պաստառի համահարթեցում գրեյդերով                                                                                         | տոն            | 2476,5 | 0,430                       | 1064,895                     |
|                                | <b>2.Ընդամենը /հազ. դրամ/</b>                                                                                                   | մ <sup>2</sup> | 9393,0 | 0,020                       | 187,860                      |
|                                | <b>2.Ընդամենը(%)</b>                                                                                                            |                |        |                             | <b>3807,955</b>              |
| <b>III Ծածկի կոնստրուկցիան</b> |                                                                                                                                 |                |        |                             | <b>2,15</b>                  |
| 1                              | Ավազակոպճային շերտ h=10 սմ                                                                                                      | մ <sup>2</sup> | 9393,0 | 0,56                        | 5260,080                     |
| 2                              | Չափազատված խճային շերտի իրականացում h=16սմ                                                                                      | մ <sup>2</sup> | 9393,0 | 2,26                        | 21228,180                    |
| 3                              | Բիտումի տարածում 4,12տ/1000մ <sup>2</sup>                                                                                       | տոն            | 38,7   | 315                         | 12190,235                    |
| 4                              | Միաշերտ տաք մանրահատիկ ա/բետոնի իրականացում h=5սմ                                                                               | մ <sup>2</sup> | 9393,0 | 5,74                        | 53915,820                    |
| 5                              | Արհեստական խոչընդոտ մանրահատիկ տաք ա/բետոնից h=7սմ /48մ <sup>2</sup> /                                                          | տոն            | 7,88   | 49,42                       | 389,430                      |
|                                | <b>3.Ընդամենը /հազ. դրամ/</b>                                                                                                   |                |        |                             | <b>92983,745</b>             |
|                                | <b>3.Ընդամենը(%)</b>                                                                                                            |                |        |                             | <b>48,05</b>                 |

| 1          | 2                                                                                                            | 3              | 4       | 5       | 6                |
|------------|--------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|---------|---------|------------------|
| <b>IV</b>  | <b>Կողնակներ</b>                                                                                             |                |         |         |                  |
| 1          | III կարգի ցամաքուրդային բնահողի մշակում էքս. 1.0մ <sup>3</sup> շերտի տարողությամբ բարձելով ա/ինքնաթափերի վրա | մ <sup>3</sup> | 244,86  |         | 149,36           |
| 2          | Բնահողի տեղափոխում մինչև 2,3կմ լիցք                                                                          | տոն            | 477,0   | 0,61    | 205,11           |
| 3          | Կողնակների հարթեցում                                                                                         | մ <sup>2</sup> | 1166,0  | 0,43    | 23,32            |
| 4          | Բնահողի խտացում պնմոգլոմերով 1 հետքով ճանցումով հաստությամբ, օրի տարածումով                                  | մ <sup>3</sup> | 244,86  | 0,72    | 176,30           |
|            | <b>4.Ընդամենը /հազ. դրամ/</b>                                                                                |                |         |         | <b>554,094</b>   |
|            | <b>4.Ընդամենը(%)</b>                                                                                         |                |         |         | <b>0,280</b>     |
| <b>V</b>   | <b>Ուղիներ և մուտքեր</b>                                                                                     |                |         |         |                  |
| 1          | Խճային շերտի իրականացում h=12սմ                                                                              | մ <sup>2</sup> | 2506,64 | 1,820   | 4562,085         |
| 2          | Բիտումի տարածում 4,12տ/1000մ <sup>2</sup>                                                                    | տոն            | 10,33   | 326,450 | 3371,366         |
| 3          | Միաշերտ տաք մանրահատիկ ա/բետոնի իրականացում h=5սմ                                                            | մ <sup>2</sup> | 2506,64 | 5,760   | 14438,246        |
| 4          | Ավազակոպճային շերտի իրականացում h=10սմ                                                                       | մ <sup>3</sup> | 2,91    | 6,500   | 18,915           |
| 5          | Մետաղական խողովակի տեղադրում d=325մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ                                                    | գծմ            | 64,60   | 31,000  | 2002,600         |
| 6          | Գլխամասի միաձույլ իրանի պատրաստում B-15 դասի բետոնից                                                         | մ <sup>3</sup> | 3,20    | 112,870 | 361,184          |
| 7          | d=0,325մ խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով-59.8գծ.մ                                               | մ <sup>2</sup> | 61,03   | 1,860   | 113,516          |
| 8          | Մետ. խողովակի գլխամասի ջրամեկուսացում երկշերտ տաք բետոնով                                                    | մ <sup>2</sup> | 12,0    | 1,240   | 14,880           |
|            | <b>5.Ընդամենը /հազ. դրամ/</b>                                                                                |                |         |         | <b>24882,792</b> |
|            | <b>5.Ընդամենը(%)</b>                                                                                         |                |         |         | <b>12,60</b>     |
| <b>VI</b>  | <b>Մայրեր</b>                                                                                                |                |         |         |                  |
| 1          | Ավազային հիմք շերտ h=12 սմ (մայր)                                                                            | մ <sup>2</sup> | 1200,0  | 0,56    | 672,000          |
| 2          | Մանրահատիկ ա/բետոն h=3սմ                                                                                     | մ <sup>2</sup> | 1200,0  | 3,65    | 4380,000         |
| 3          | Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափի բետոնե հիմքի վրա                                                   | գծմ            | 1464,0  | 15,8    | 23131,200        |
| 4          | Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B20/1328գծ.մ/                                                                | մ <sup>3</sup> | 26,56   | 70,99   | 1885,494         |
|            | <b>6.Ընդամենը /հազ. դրամ/</b>                                                                                |                |         |         | <b>30068,694</b> |
|            | <b>6.Ընդամենը(%)</b>                                                                                         |                |         |         | <b>15,40</b>     |
| <b>VII</b> | <b>Վաքեր</b>                                                                                                 |                |         |         |                  |
| 1          | Ավազակոպճային շերտի իրականացում վաքի տակ                                                                     | մ <sup>3</sup> | 5,265   | 7,12    | 37,487           |
| 2          | Հավաքովի 30x34սմ վաքի տեղադրում/81 գծ.մ/                                                                     | հատ            | 27      | 60,36   | 1629,720         |
| 3          | 30x34սմ վաքի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով                                                             | մ <sup>2</sup> | 102,06  | 1,24    | 126,554          |
| 4          | Վաքի և խողովակի միացման հատվածում բետոնի իրականացում B-15 դասի                                               | մ <sup>3</sup> | 1,4     | 67,1    | 93,940           |
| 5          | Բետոնե եզրաքար 15X30սմ բետոնե հիմքի վրա /անվտանգության ուղղորդիչ/                                            | գծմ            | 40,5    | 9,14    | 370,170          |
| 6          | Ավազակոպճային շերտի իրականացում վաքի տակ                                                                     | մ <sup>3</sup> | 42,86   | 7,12    | 305,163          |
| 7          | Հավաքովի բետոնե վաքերի տեղադրում, ծածկի սալերով (50x60սմ) , 564գծմ                                           | հատ            | 188     | 127,8   | 24026,400        |
| 8          | 50x60սմ վաքի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով                                                             | մ <sup>2</sup> | 817,80  | 1,24    | 1014,072         |
| 9          | Վաքի և խողովակի միացման հատվածում բետոնի իրականացում B15 դասի                                                | մ <sup>3</sup> | 2,6     | 67,1    | 174,460          |
|            | <b>7.Ընդամենը /հազ. դրամ/</b>                                                                                |                |         |         | <b>27777,966</b> |

|      |                                                                          |                |         |       |          |
|------|--------------------------------------------------------------------------|----------------|---------|-------|----------|
| 1    | 2                                                                        | 3              | 4       | 5     | 6        |
|      | 7.Ընդամենը(%)                                                            |                |         |       | 14,09    |
| VIII | Թեքուղիներ                                                               |                |         |       |          |
| 1    | Հարթեցնող շերտ ավազից h=5սմ, 32մ <sup>2</sup>                            | մ <sup>3</sup> | 1,60    | 0,23  | 0,368    |
| 2    | Բետոնե հիմքի պատրաստում h=10սմ հաստ.B15 դասի բետոնից                     | մ <sup>3</sup> | 3,20    | 67,86 | 217,152  |
| 3    | Ցեմենտավազե չոր խառնուրդի պատրաստում 30մմ հաստ.<br>բազալտե սալիկների տակ | մ <sup>3</sup> | 0,96    | 44,2  | 42,432   |
| 4    | Թեքահարթակների երեսապատում բազալտե սալիկներով h=3սմ                      | մ <sup>3</sup> | 32,0    | 16,1  | 515,200  |
| 5    | Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե<br>հիմքի վրա       | զծ.մ           | 48,0    | 15,8  | 758,400  |
|      | 8.Ընդամենը /հազ. դրամ/                                                   |                |         |       | 1533,552 |
|      | 8.Ընդամենը(%)                                                            |                |         |       | 0,69     |
| IX   | Մետաղական կիսախողովակ d = 530մմ /Ջրընդունիչ/                             |                |         |       |          |
| 1    | Ավազակոպճային հիմքի իրականացում h=10սմ                                   | մ <sup>3</sup> | 0,89    | 6,5   | 5,772    |
| 2    | d=530մմ կիսախողովակի տեղադրում 1զծ.մ=45.15կգ; ծ=7մմ                      | զծ.մ           | 12,0    | 43,85 | 526,200  |
| 3    | Կիսախողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով-12զծ.մ                  | մ <sup>2</sup> | 10,0    | 1,86  | 18,600   |
| 4    | Անկյունակ L50x50x5 մմ-90.48կգ                                            | զծ.մ           | 24,0    | 3,38  | 81,120   |
| 5    | Ամրան Ø 20մմ A500c                                                       | տոն            | 0,25153 | 637,1 | 160,251  |
|      | 9.Ընդամենը /հազ. դրամ/                                                   |                |         |       | 791,943  |
|      | 9.Ընդամենը(%)                                                            |                |         |       | 0,30     |

*Handwritten signature*

| 1  | 2                                                                                                      | 3              | 4      | 5      | 6        |
|----|--------------------------------------------------------------------------------------------------------|----------------|--------|--------|----------|
| X  | Մետաղական խողովակներ d=0,530մ, Պ47+40, Պ48+60, Պ412+40                                                 |                |        |        |          |
| 1  | 10 և IV կարգի բնահողի մշակում էքս. կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար                              | մ <sup>3</sup> | 21,0   | 0,67   | 14,070   |
| 2  | Նույնը ձեռքով                                                                                          | մ <sup>3</sup> | 4,0    | 5,87   | 23,480   |
